DOI: 10.57192/18291864–2022.4–10

Դավիթ Ռ. Մոսինյան
Փիլ. գիտ. թեկնածու

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՈՒՄ ԵՎ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ*

Բանալի բառեր – խաղաղություն, պատերազմ, բռնություն, ագրեսիա, թշնամի, աշխարհակարգ, պատմություն, պատում, իրողություն:

Մուտք

Խաղաղությունն ու անվտանգությունը վաղուց արդեն մեր կյանքի կարևորագույն չափորոշիչներից են դարձել, քանզի համամարդկային արժեքների շարքում դրանք առաջնային տեղ են զբաղեցնում: Եվ այնուամենայնիվ, չնայած վերջին տասնամյակներին աշխարհում պատերազմի պատճառած մահացությունների թիվը կրճատվել է, պատերազմական գործողություններն ընդհանուր առմամբ նվազել են, դրանց ուժականությունը ոչ միայն չի թուլացել, այլև ընդգրկումները լայնացել են՝ ընդհուպ մինչև տարբեր հարթակներում ներգրավելով խաղաղ քաղաքացիների: **Պատերազմները փոխակերպվել են, և դրանք հետազոտողներն այլևս չեն կարող բավարարվել բուն պատերազմական գործողությունների վերհանմամբ և ուսումնասիրմամբ:** Ինչպես որ զենքի ուժով գաղութարարության ավարտից հետո ընդամենը դրա ձևերը փոխվեցին ու նաև բացահայտվեցին հետգաղութատիրական հետազոտությունների միջոցով, այդպես էլ պատերազմների բնույթի վերափոխումները ենթադրում են հետազոտական նոր մեթոդների մշակում և կիրառում: Մասնավորապես, տեղեկատվական, հիբրիդային պատերազմ–

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.12.2022: Հետազոտությունն իրականացվել է ԲՊՀ ֆինանսական աջակցությամբ՝ N1ԳՀ-22/005 ծածկագրով հայտի շրջանակներում:

ների ի հայտ գալով արտաքուստ նմանություն է ստեղծվում պատերազմական և խաղաղ վիճակների միջև: **Ուստի կարիք կա ուսումնասիրելու խաղաղությունը որպես այդպիսին, որպես համակեցության նպատակ՝ այդ դիրքերից որոշարկելու պատերազմի բնույթն ու տարածման սահմանները**: Խաղաղությունը տևականորեն դիտարկվել է բարոյական, կրոնական և նմանօրինակ դիտանկյուններից, իսկ հնարավո՞ր է արդյոք այդ դիտարկումների գիտակարգայնացումը: Ի՞նչ է նշանակում խաղաղություն, ե՞րբ կարելի է արձանագրել դրա առկայությունը, այն իրականությա՞ն մաս է, թե՞ համաձայնագրային տեքստերի: Սրանք հարցեր են, որոնց պատասխանները միտված են լինելու ոչ միայն որոշակիացնելու խաղաղության հնարավորությունն ընդհանրապես, այլև վերանայելու պատմությունը և այդ տեսանկյունից իմաստավորելու քաղաքական տեսլականների հեռանկարները:

1. Պատերազմի պատմությունը և խաղաղության պատումը

Պատմությունը, Հերոդոտոսից սկսած, հղացվել և գրվել է նախ և առաջ որպես պատերազմի պատմություն: Պատմության առանցքում, պատմագիրների ուշադրության կենտրոնում պատերազմներն էին: Մյուս ոլորտները՝ մշակույթ, ընկերային կյանք, տնտեսական զարգացում և ի վերջո՝ հանրության խաղաղ վիճակ, մնացել են պատերազմի ստվերում՝ ներկայանալով որպես պատումներ, որոնց իսկությունը հնարավոր չէ ստուգել, որովհետև դրանք ածանցված են այլ իրողություններից: Տևական ժամանակ պատմագրության մեթոդաբանությունը մշակվել ու առաջադրվել է հենց այդ ուղղությամբ՝ առանցքում ունենալով բացառապես իրադարձությունները (մասնավորապես՝ ռազմաքաղաքական), իսկ խաղաղ վիճակում մարդու մասին խոսելու լեզու չի ձևավորվել: Այս առումով հակադրություն կա պատերազմի պատմության-իրականության և խաղաղության պատումի միջև, որտեղ վերջինս գոյաբանական հիմնավորման կարիք ունի: Այդօրինակ մեթոդաբանությունն ունի իր փիլիսոփայական-հասարակագիտական փաստարկվածությունը, որի հիմնադրույթն այն է, որ պատերազմն անխուսափելի և նույնիսկ անհրաժեշտ իրողություն է, ինչը բխում է մարդու և հասարակության բնույթից ու էու-

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

թյունից, որ կարելի է նկատել՝ հղում անելով մի շարք մտածողների՝ Հերակլիտոսից մինչև Հեգել: Հերակլիտոսից մեզ հասած 53-րդ կոտորակը՝ «Պատերազմը ամենայն ինչի հայրն է և թագավորը» դատողությունը, պատերազմի գովերգման ու պատմականացման աղբյուր է դարձել: Իհարկե, դա հունական դիալեկտիկական մտածողության դրսևորում է, և խոսքն ամենուր հանդիպող բնական պայքարի ու դրա հետևանքով աշխարհակարգի ձևավորման մասին է: Այնուամենայնիվ, այն փոխադրվել է նաև բուն պատերազմական տիրույթ, առավել ևս որ հերակլիտոսյան միտքը շարունակում է, թե «պատերազմը ոմանց աստված է կարգում, ոմանց՝ մարդ, ոմանց ազատ է դարձնում, ոմանց՝ ստրուկ»: Մարդկային հարաբերությունները ևս կարգավորվում են որոշակի պայքարի, դեմհանդիմանության միջոցով, ինչը ևս մեկ լրացուցիչ փաստարկ էր պատերազմի առաջնայնության օգտին:

Նոր ժամանակներում հասարակության հնարավորության հարցի համատեքստում պատերազմի և խաղաղության փոխհարաբերության խնդիրը նորովի է վերահայտնվում՝ ածանցված լինելով հանրության բնական վիճակի որպիսության խնդրից, որին առաջիններից մեկն անդրադարձել է Թոմաս Հոբսը: Նա իր «**Լևիաթան**» աշխատության մեջ մեկնարկում է այն կետից, որ բնությունը մարդկանց ստեղծել է գրեթե հավասար. ֆիզիկական ու մտավոր առավելությունները կամ պակասությունն այնքան չնչին են, որ բավարար չեն, որ մեկը բարօրություն ստանալու իրավունք ու հավակնություն ունենա, մյուսները՝ ոչ: Ավելին՝ ֆիզիկական ընդունակության թուլությունը կարող է լրացվել տարատեսակ նենգություններով, այնպես որ բոլորը բոլորին հավասար են և հետևաբար մրցակից: Առավել ևս այդպես է մտավոր ընդունակությունների պարագայում[1]: Մրցակցություն ծնող այդ հավասարությունն առաջ է բերում անվստահություն, ինչն էլ իր հերթին պատերազմի հող է նախապատրաստում: Այսինքն՝ բնական վիճակը կարելի է բնորոշել իբրև «բոլորի պատերազմը բոլորի դեմ», քանի որ պատերազմը միայն ռազմական գործողությունները չեն, այլ նաև պատերազմին պատրաստվելու միջանկյալ ժամանակահատվածը: Ինչպես որ երաշտի գոյությունը չի հերքվում մեկ-երկու անձրևով, այնպես էլ պատերազմը մարտերով

1 Տե՛ս **Гоббс Т.**, Сочинения в двух томах, т. 2. Пер. **А. Гутермана**, М., «Мысль», 1991, էջ 93-94:

չի սահմանափակվում՝ ներառելով նաև ամբողջ նախապատրաստական ժամանակահատվածը: Դրանից դուրս շրջանն է համարվում **խաղաղություն**[2], որը, փաստորեն, սահմանվում է մեթոդաբանորեն, բայց դեռևս չկան գոյաբանական հիմքերը: Այստեղից էլ՝ պատերազմի առաջնայնությունը խաղաղության նկատմամբ: Եվ քանի որ հանրության բնական վիճակը պատերազմական է՝ ներառելով նախապատերազմական ու հետպատերազմական շրջանները, ուստի պատմության առարկան էլ դառնում է **Լևիաթանի՝** պետության կամ մահկանացու Աստծո կայացումը, որն ապահովում է հանրության անդամների միջև դաշինքն ու կարգավորվածությունը[3]:

Ավելի ուշ հասարակական դաշինքի կազմավորմանն է անդրադառնում նաև Ժան-Ժակ Ռուսոն՝ ըստ էության կրկնելով հոբսյան հայեցակարգը՝ միապետականության գաղափարը փոխարինելով հանրապետականությամբ ու ժողովրդավարությամբ: «Քանի որ մարդ արարածը բնական որևէ իշխանություն չունի իր նմանի նկատմամբ, և ուժը որևէ իրավունք չի ստեղծում, ապա մարդկանց միջև ամեն տեսակի օրինական իշխանության հիմքը համաձայնություններն են»[4],- գրում է Ռուսոն՝ հավելելով, որ համաձայնություններով լուծվում են ներպետական հարցերը, բայց ոչ միջպետական, քանի որ պատերազմական վիճակը վերաբերում է ոչ թե մարդկանց, այլ պետություններին[5], որոնց միջև հարաբերությունները չեն կարգավորվում նույն ձևով, քանի որ չկա, այսպես ասած, վերազգային դաշինքի կազմավորման նույնպիսի մեխանիզմ:

Լուսավորության դարաշրջանում պատերազմական վիճակի առաջնայնությունն առնչակցվում է նաև մտածողության յուրահատկությանը, և առաջադրվում է գաղափար, որ մտածողության ազատականացմամբ և հեղափոխության իրագործմամբ կփոխվի նաև հանրության մեջ պատերազմի դերը: Բանականության հանդեպ լուսավորական հավատը հող էր նախապատրաստում պատերազմի անհրաժեշտությունը հաղթահարելու համար և փորձում էր հետզհետե ավելի մեծ ուշադրություն դարձնել խաղաղությանը: Կանտի «Հավիտենական խաղաղության շուրջ» աշխատությունն այդ առու-

2 Տե՛ս նույն տեղում, էջ 94-96:
3 Տե՛ս նույն տեղում, էջ 133:
4 **Ռուսո Ժ.-Ժ.**, Հասարակական դաշինքի մասին, թարգմ. **Ա. Բլբուլյան**, Եր., «Զանգակ», 2016, էջ 25:
5 Տե՛ս նույն տեղում, էջ 29:

մով շրջադարձային է, որը թեև նույնպես պնդում է, որ մարդկության բնական վիճակին հատուկ է պատերազմը, ոչ թե խաղաղությունը, բայցև հաստատում է վերջինիս լինելության հրամայականը[6]: Ըստ Կանտի՝ լուսավորական հեղափոխության հետևանքով ձևավորվող քաղաքացիական հասարակության մեջ պատերազմները վերջ կգտնեն, քանի որ բանականությամբ առաջնորդվող քաղաքացիները կնախընտրեն համագործակցությունը և դրանով իսկ կնպաստեն խաղաղության հաստատմանը, քանի որ մարդու հանդեպ սերը և օրենքի հանդեպ հարգանքը պարտք է, որ նրանք տալիս են հետզհետե[7]: Այս խիստ լավատեսական դիրքորոշումն ուղեկցվում է նաև այն նկատառումով, որ խնդրո առարկան ոչ թե պատերազմական գործողությունների միջև ընկած զինադադարներն են, այլ ամենայն թշնամանքից անդին եղած բուն խաղաղությունը, որին կցված «հավիտենական» մակդիրը նույնիսկ ավելորդաբանություն է դառնում[8]:

Լավատեսության հիմնավորումները, սակայն, տեսական մակարդակում բավարարվում են պիտոյական արտահայտություններով, ինչպես, օրինակ, «մշտական բանակները (miles perpetuus) ժամանակի ընթացքում պիտի ամբողջությամբ լուծարվեն»[9], կամ «ոչ մի պետություն չպետք է բռնությամբ միջամտի մեկ այլ պետության սահմանադրությանը և կառավարմանը»[10], իսկ գործնական մակարդակում վերացական տեսք են ստանում՝ հանդիպելով լայն թափ առնող նորանոր պատերազմների: Թե՛ վիճակագրորեն, թե՛ հասարակագիտական հետազոտության տվյալներով պատերազմը լոկ սրբագրման կարիք ունեցող պատահականություն չէ, այլ խաղաղության նկատմամբ առավելություն ունեցող, գերիշխող իրողություն, որն իր վրա է գրավում սոցիալ-քաղաքական մտքի ուշադրությունը: Հակառակը պնդողներին կարելի է հեշտությամբ դասել ուտոպիական մտածողների շարքը:

Իրապաշտ ռազմաքաղաքական մտքի դիտանկյունից այդ լավատեսությունը հասկանալի չէր, և դրա շրջանակներում ձևակերպվեց կարծես հենց Կանտի դեմ ուղղված մի դրույթ, որը դարձավ պատերազմի տեսության առանցքներից մեկը: Խոսքը Կառլ ֆոն

6 Տե՛ս **Kant I.**, Zum ewigen Frieden, Leipzig, Verlag von Felix Meiner, 1919, էջ 11:
7 Տե՛ս նույն տեղում, էջ 54-55:
8 Տե՛ս նույն տեղում, էջ 4:
9 Նույն տեղում, էջ 5:
10 Նույն տեղում, էջ 7:

Կլաուզևիցի «Պատերազմը պարզապես քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով»[11] արտահայտության մասին է, որը, ըստ էության, լեգիտիմացնում է պատերազմը և պնդում, որ դա է քաղաքականության հիմնական գործիքը: Կլաուզևիցը մերժում ու կեղծ մարդասիրական է համարում այն դիրքորոշումը, թե անհրաժեշտ է սահմանափակում ու չափավորություն մտցնել պատերազմի մեջ: Պատերազմը գոտեմարտ է, որի նպատակն է ֆիզիկական բռնության միջոցով ջախջախել թշնամուն և ստիպել կատարել իր կամքը[12]: Պատերազմի, բռնության առաջնայնության գաղափարը ամրապնդվեց ու լրացվեց Կլաուզևիցով հիացած մեկ այլ տեսաբանի՝ Ռենե Ժիրարի աշխատություններում, որը ցույց էր տվել զոհաբերության կամեցողության սուբստանցիոնալ բնույթը և դրանից սերող վրեժի հարատևությունը՝ եզրակացնելով, որ «Եթե մարդիկ ցանկանում են կանխել վրեժի անվերջ բռնկումը (ինչպես որ այսօր ցանկանում ենք կանխել միջուկային պատերազմը), բավարար չէ ընդամենը համոզել ընկերներին, թե բռնությունը նողկալի է. մարդիկ ատում են բռնությունը, հենց այդ պատճառով էլ իրենց պարտքն են համարում վրեժ լուծել»[13]: Իսկ Կլաուզևիցին անդրադարձ կատարող իր վերջին գրքում նա հայտարարում է, որ իր ուսմունքի սաղմերը մեծ մասամբ կարելի է գտնել մեծն ռազմական գործչի ու տեսաբանի աշխատություններում[14]:

Ասվածին եթե ավելացնենք նաև ազգայնականության դիրքերից պատերազմի՝ իբրև ազգային միասնության նախապայմանի շուրջ քննարկումները, կուրվագծվի պատերազմակենտրոն պատմագրության ողջ հայեցակարգը: Բոլոր ոլորտները այս կամ այն կերպ կախված են պատերազմներից, ուստի կյանքի պատմականացումը ենթադրում է նախ և առաջ պատերազմի պատմության ստեղծում ու առաջադրում: Սակայն այդ մոտեցումը պատմագիտական ճգնաժամի պատճառներից դարձավ, որովհետև մի կողմից՝ խոչընդոտում էր ամբողջական ու համընդգրկուն պատմության ստեղծումը, մյուս կողմից՝ նույն իրադարձությունների վերաշարադրմամբ փակուղու առաջ էր կանգնեցնում: Եվ քանի որ պատերազմը կենտ-

11 **Clausewitz C. von**, Vom Kriege, Berlin, 1883, S. 16.
12 Տե՛ս նույն տեղում, էջ 1:
13 **Girard R.**, Violence and the Sacred. Translated by **P. Gregory**, The John Hopkins University Press, 1989, p. 15.
14 Տե՛ս **Жирар Р.**, Завершить Клаузевица. Беседы с Бенуа Шантром, М., ББИ, 2019:

ռոնական դիրք ուներ հասարակական կյանքում, ձգնաժամի հաղթահարման բանալին պատմագիտության ասպարեզում էր որոնվում: Մասնավորապես, խնդիրը վերաբերում էր պատերազմների միջև ընկած ժամանակահատվածներին. ինչպե՞ս հասկանալ այդ ընթացքը և ինչպե՞ս վեր հանել բուն իրադարձություններից այն կողմ եղած միջավայրն ու պատմական ոչ բացահայտ շերտերը: Դա հնարավոր է իրականացնել՝ փոխելով կա՛մ հետազոտության մեթոդները, կա՛մ էլ առարկան:

Միշել Ֆուկոն, որ մշտապես մտահոգվել է պատմագիտության փոխակերպմամբ, ուղղակիորեն արձագանքելով Կլաուզևիցի հայտնի բանաձևին, իր տարբեր աշխատություններում շրջում է այն. «Քաղաքականությունը տարբեր միջոցներով շարունակվող պատերազմն է»[15]: Սա արդիականությունը հասկանալու և բացատրելու միտվածություն է, որովհետև արդի քաղաքականությունը ձևավորվել է հենց որպես պատերազմները կամ խռովությունները կանխելու միջոց: Ֆուկոն հակված էր կազմաքանդելու համընդհանրական, անընդհատական պատմությունը և հարցեր բարձրացնելու ընդհատումների, խզումների մասին: Տվյալ դեպքում գլխավոր հարցն այն է, թե ինչու և ինչպես է կապ հաստատվել պատերազմի և «խաղաղ» քաղաքականության միջև: Նոր ժամանակներից սկսած՝ պետական բանակները կազմավորվել են ոչ այնքան տարածքային նորանոր նվաճումների, որքան քաղաքացիական խաղաղության ապահովման համար: Նկատելի է դառնում մի պատմական պարադոքս, որ բանակը մտածվում է իբրև պատերազմը կանխելու միջոց[16]: Սա նշանակում է, որ, ըստ էության, տարբերակելի չէ պատերազմի և խաղաղության սահմանը, և խաղաղության միտված ամենայն քաղաքականություն այսպես թե այնպես ուղեկցվում է «լուռ» պատերազմով: Սակայն այս դեպքում հնարավորություն է ստեղծվում բացելու պատմական միջակայքերը և ուշադրության առանցքը դարձնելու «խաղաղություն» կոչվածը՝ խնդիր դնելով պարզելու դրան վերաբերելի իրողականությունը:

---

15 **Ֆուկո Մ.**, Հսկել և պատժել, թարգմ.՝ **Ա. Մուրադյան**, Եր., «ԱԼՄ», 2003, էջ 220: Տե՛ս նաև **Ֆուկոյ Մ.**, Իմացութեան կամեցողութիւնը: Սեռականութեան պատմութիւն 1, թարգմ.՝ **Մ. Նշանեան**, Եր., «Ինքնագիր», 2019, էջ 128-129, **Фуко М.**, Нужно защищать общество, пер. **Е. А. Самарская**, СПб, «Наука», 2005, էջ 36:

16 Տե՛ս **Ֆուկո Մ.**, նշվ. աշխ., էջ 220:

Խաղաղությունը հետազոտության առարկա դարձնելը կապված է մի շարք դժվարությունների հետ, որովհետև այն, ի տարբերություն պատերազմի, ուղղակիորեն մատնանշելի չէ, չկա իբրև իրադարձություն: Այնուամենայնիվ, դա ճանապարհ է՝ փորձելու վեր հանել պատմության մութ ծալքերը, որոնք մնում են քողարկված պատերազմի պատմագրության հետնախորքում: 1950-ական թթ. սկսած՝ հետզհետե տարածում ստացան բուն խաղաղությանն անդրադարձները, որոնք հանգեցրին նաև ակադեմիական հանդեսների ստեղծմանը (դրանց մեջ կենտրոնականը 1964 թվականից հրատարակվող «**Journal of Peace Research**» երկամսյա հանդեսն է): Խաղաղության հետազոտությունները գրեթե միշտ սկսում են իրենց առաջադրված մարտահրավերների վերհանումից, որոնք կարելի է բաժանել մի քանի խմբի: Նախ՝ խաղաղությունը հասկանալի կլինի, եթե դիտարկվի քաղաքական աշխարհագրության հնարավորինս համակողմանի ու ամբողջական պատկերի համատեքստում, քանի որ դրա առկայությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Այնուհետև՝ կարևոր է ապահովել պատմական ընթացքի լայն ընդգրկումը, որպեսզի պատերազմի ավարտը չշփոթվի ճակատամարտի ավարտի կամ պատերազմի բնույթի փոփոխության հետ: Վերջապես՝ քանի որ խաղաղության կառուցման գործում կա կուլիսային մի մեծ հատված, քաղաքականության և ակադեմիականության միջև կապի դժվարություն է առաջանում, որը պետք է հաշվի առնել[17]: Նշված մարտահրավերները հանգեցնում են բուն առարկայի անորսալիությանը առնչվող բարդությունների, որոնք երբեմն թույլ չեն տալիս պատումի մակարդակից անցնել իրողությանը, ինչի պատճառով հետազոտությունը հանգում է պատերազմի նկարագրմանը՝ խաղաղությունը դիտարկելով իբրև դրա բացակայություն:

2. Խաղաղության բռնի ուժը

Դոն Քիշոտը համանուն վեպում հեգնանքով կամ կիսահեգնանքով հայտարարում է, թե «խաղաղությունն է պատերազմի իսկական նպատակը»[18]՝ դրանով իսկ բացահայտելով ամենայն պատերազմի

17 Տե՛ս **Reychler L.**, Challenges of Peace Research, “International Journal of Peace Studies”, Spring/Summer 2006, vol. 11, N 1, էջ 1-16:

18 **Սերվանտես Մ. դե**, Հնարամիտ Հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի, հատ. 1, Եր., 1950, էջ 349:

արդարացման հիմքը և մատնանշելով այն հանգամանքը, որ խաղաղության պատումը թաքնված է պատերազմական նպատակներում: Խաղաղության ճառաբանությունը (դիսկուրսը) սկիզբ է առնում պատերազմական իրավիճակներում, իսկ ամեն պատերազմ հիմնավորվում է նոր ու ավելի հիմնարար խաղաղության տեսլականով: Բնական վիճակում խաղաղության լինելության հակահոբսյան կանխադրույթի ճշմարտացիության չվիճարկման դեպքում էլ, միևնույն է, չի հիմնավորվում խաղաղության ինքնաբավությունը, որովհետև խաղաղությունը թեմա է դառնում միայն պատերազմի ստվերում, իսկ պատերազմի համատեքստում այն սոսկ պատում է, որ ուզում են իրողություն դարձնել պատերազմող կողմերը: Անգամ գրեթե ամբողջ աշխարհին ընդգրկող համաշխարհային պատերազմներն ունեին «խաղաղասիրական» նկրտումներ: Առաջին աշխարհամարտը նպատակ էր հետապնդում պատերազմով վերջ դնելու բոլոր պատերազմներին ու կայացնելու ժողովրդավարությունը, ինչից հետո, ի դեպ, ծնվեցին ֆաշիզմն ու կոմունիզմը, իսկ Երկրորդը՝ կազմալուծելու միակողմանի համակարգը և ստեղծելու փոխկարգավորվող աշխարհակարգ, ինչի արդյունքը եղավ Սառը պատերազմը[19]: Միլիոնավոր կյանքեր խլած պատերազմները մղվել են հանուն խաղաղության, որովհետև փաստարկվել է, որ հակախաղաղասիրական հավակնությունները կարող են զսպվել միայն համապատասխան ուժով, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև բռնությամբ: Պատերազմում մի կողմի հաղթանակը բռնի իշխանատենչություն է ձևավորում պարտվող կողմի հանդեպ, իսկ փոխզիջումներն ու փոխզսպումները՝ բոլոր կողմերից դժգոհություն, որ կարող էր ավելի լավ լինել, ուստի եղածը բռնության դրսևորում է: Այս առումով միանգամայն տեղին ու հասկանալի է ժխտական և դրական խաղաղությունների առանձնացումը, որոնցից առաջինը պատերազմի բացակայությունն է, իսկ երկրորդը՝ գոյաբանական հիմքեր ունեցող իրողությունը[20]: Ընդ որում, երկրորդի հետազոտումն իրականանում է առաջինի ուսումնասիրման միջոցով, քանի որ առաջին մոտեցմամբ հստակորեն զատորոշելի չեն «խաղաղություն» և «ոչ պատերազմ» հասկացությունները:

19 Տե՛ս **Huntington S.**, The Clash of Civilizations and the Remaking of World Order, New York, Simon & Schuster, 1996, էջ 32:

20 Տե՛ս **Polat N.**, Peace as War, “Alternatives: Global, Local, Political”, Oct.-Dec. 2010, vol. 35, N 4, էջ 318:

Խաղաղության գլխավոր տեսաբան Յոհան Գալթունգն առաջարկում է խաղաղության գաղափարը քննելիս հաշվի առնել երեք կարևոր սկզբունք. ա) «խաղաղություն» եզրույթն օգտագործվում է՝ արտահայտելու հանրության մեջ շատերի բանավոր համաձայնությունը՝ իբրև սոցիալական նպատակ, բ) այդ սոցիալական նպատակները կարող են լինել բարդ, բայց դրանց հասնելն անհնարին չէ, գ) «խաղաղությունը բռնության բացակայությունն է» պնդումը վավերական է[21]: Երրորդ սկզբունքը, ըստ էության, պատերազմի և ոչ պատերազմականի միջև սահմանի ընդլայնումն է, ոչ պատերազմական վիճակի բացորոշումը: Պատերազմական գործողությունների բացակայությունը դեռևս խաղաղություն չէ, քանի որ դրանց փոխարեն կարող է լինել բացահայտ, դիտավորյալ կամ, որ ավելի կարևոր է, ոչ բացահայտ, անգամ ոչ դիտավորյալ բռնություն, որը, որպես կանոն, կառուցվածքային, համակարգային բնույթ ունի: Քաղաքական համակարգը, միջպետական կարգավորումներն ու փոխհարաբերությունները, նվաճված տարածքում կատարվող մշակութային վանդալիզմն ու սրբապղծությունները կարող են ոչ անձնական բռնության օրինակ լինել: Այս տեսանկյունից ժխտական խաղաղությունը անձնական բռնության բացակայությունն է, իսկ դրական խաղաղությունը՝ կառուցվածքային բռնության[22]:

Այս համատեքստում մեկ այլ կարևոր հարց է ծագում. հնարավո՞ր է արդյոք, և եթե այո, ինչպե՞ս է հնարավոր ամենայն բռնությունից ձերբազատումը: Կա՞ այլ տարբերակ, քան բռնության նկատմամբ բռնություն կիրառելը, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է փակ շրջանի: Այս հարցը տանում է իրավունքի փիլիսոփայության դաշտ, որտեղ լուսավորականների զարգացրած բնական իրավունքի տեսությունն արդարացնում է բռնությունը իբրև բնությունից անօտարելի հատկություն, ինչին հակադրվում է իրավական պոզիտիվիզմը՝ պնդելով պետության և խաղաղության կայացման հնարավորությունն ու անհրաժեշտությունը:

Վալտեր Բենիամինը բռնությանը նվիրված իր դասական դարձած հոդվածում, անդրադառնալով բռնության պարադոքսալ բնույթին, նկատում է, որ կոնֆլիկտային հարաբերությունների կարգա-

21 Տե՛ս **Galtung J.**, Violence, Peace, and Peace Research, “Journal of Peace Research”, 1969, vol. 6, N 3, էջ 167:
22 Տե՛ս նույն տեղում, էջ 183:

վորման ոչ բռնի ձև չկա, որովհետև, ի վերջո, որքան էլ համաձայնությունը լինի խաղաղասիրական, այն առնվազն ենթադրում է բռնության իրավունքի կիրառում դաշինքը չպահպանող կողմի նկատմամբ[23]: Եթե կա կարգ, ուրեմն նախատեսված է նաև այն վերահսկելու մեխանիզմ, որի մեջ մտնում է նաև այն խախտելու համար նախատեսված պատիժը: Խաղաղության գոյաբանականացումը նշանակում է բռնության պարզ բացասումից անցնել այն կողմ և բացահայտել իրողություն, որը թույլ կտա մեթոդաբանորեն նաև բռնությունը դիտարկել իբրև խաղաղության բացակայություն: Անձնային հարաբերություններում դրա լիարժեք հնարավորությունը կա, բայց հակամարտությունները կարգավորում են ոչ թե անձինք, այլ որոշակի համակարգեր, որոնցում կան բռնություն ենթադրող օրենքներ ու կանոններ: Անձնային մակարդակում կան բռնությունը հաղթահարելու ունակ հոգեկան իրողություններ՝ ազատությունը, ներումը, երջանկությունը և այլն, որոնք, որպես այդպիսին, չկան հասարակական, միջպետական, քաղաքակրթական մակարդակներում, որոնցում, սակայն, կարող է լինել և թերևս կա բռնությանը վերջ դնելու կամեցողություն: Վ. Բենիամինն այդ համատեքստում առաջադրում է «**աստվածային բռնություն**» հասկացությունը՝ իբրև վերջին և արդար բռնություն հանուն խաղաղ կյանքի՝ որպես օրինակ բերելով կրթադաստիարակչական բռնությունը[24]: Կրթության մեջ կա մի էական ու խորքային հատված, որը չի կարգավորվում օրենքով, զուտ իրավունքի հարց չէ, այլ մտավոր, հոգեբանական բռնությունը չբացառող գործունեություն, որը միտված է դիմացինի անվերապահ բարոությանն ու կատարելագործմանը:

Համաբանորեն՝ գերտերություններն իրենց իրավունք են վերապահում մուտք գործելու իրենց չափանիշներով թերզարգացած պետությունների տարածք և սրբագրելու բռնություն ենթադրող իրավիճակները: Եվ ինչպես կրթության ոլորտում հնարավոր չէ կանխավ ապացուցել առաջարկվող ուղու ճշմարտացիությունը, այնպես էլ քաղաքական համակարգի հիմնավորումն ու պարտադրումը արդեն իսկ բռնությամբ հղի վիճարկելի հարցեր է առաջ բերում: Առաջ է գալիս չափանիշի հավերժական խնդիրը, որ Սլավոյ Ժիժեկի խոսքերով

23 Տե՛ս **Benjamin W.**, Zur Kritik der Gewalt, “Gesammelte Schriften”, II, Suhrkamp, 1991, էջ 190:
24 Տե՛ս նույն տեղում, էջ 200:

հնչում է այսպես. «...չկան «օբյեկտիվ» չափանիշներ, որ թույլ կտան բռնության գործողությունը համարել աստվածային»[25]: Մարդկային, չափազանց մարդկային աշխարհում, ժողովրդավարության պայմաններում աստվածային բռնությունը մնում է սոսկ իբրև վերացական գաղափար, որի կենսագործումը հակամարտությունների լուրջ տեղիք է տալիս: Ընդ որում, եթե հաշվի առնենք նաև մարդկանց աշխարհում **միմեսիսի (կրկնօրինակման)** հիմնավոր գոյությունը, անհնար կլինի գտնել բռնության աղբյուրը: Որևէ տարածք ներխուժումը, որպես կանոն, հիմնավորվում է այնտեղից սպասվող հնարավոր վտանգի հանգամանքով: Այս առումով անիմաստ է դնել նախնական բռնության ծագման հարցը, քանի որ այն միշտ հղում է իրենից առաջ եղած բռնությանը, թեկուզ սպառնալիքի մակարդակում: Տեղին է հիշել Ռ. Ժիրարի մարդաբանական բացահայտումներից մեկը, ըստ որի՝ ի տարբերություն գիշատիչների՝ մարդկանց աշխարհում ագրեսիա գոյություն չունի. այստեղ հարձակումն արձագանք է, կամ այլ կերպ՝ ագրեսիան միշտ պատասխան է այլ ագրեսիայի[26]: Եվ քանի որ բռնությունը՝ իբրև պատերազմի առանցք, գոյություն ունի ինքնաբավ կերպով և շարունակ հիմնավորում է ինքն իրեն, խաղաղությունը կմնա ընդամենը իբրև այլ կողմից եկող բռնություն կամ էլ վերացական պատում, եթե դիտարկվի որպես պատերազմի հակադրություն: **Ուրեմն խաղաղությունն իրողութենական կերպ է ձեռք բերում պատերազմի տրամաբանական ավարտի պարագայում:**

3. Խաղաղության սուբյեկտը

Խաղաղության գոյաբանական հիմքի որոնումը ենթադրում է խաղաղության սուբյեկտի (ենթակայի) որոշարկում. ո՞վ կամ ի՞նչն է ապահովում խաղաղությունը, ո՞ւմ կամ ինչի՞ շնորհիվ է հաստատվում խաղաղությունը: Պատերազմելը կատարողական երևույթ է, կարելի է հեշտությամբ մատնանշել այն վարող սուբյեկտին կամ սուբյեկտներին: Բայց խաղաղությունը չի կարող ամփոփվել կատարողական (պերֆորմատիվ) դատողություններում, ինչը երևում է նույնիսկ լեզվական մակարդակում. «պատերազմել» կա, իսկ «խաղաղել» կամ

25 **Žižek S.**, Violence, New York, Picador, 2008, p. 200.
26 Տե՛ս **Жирар Р.**, նշվ. աշխ., էջ 38:

«խաղաղություն անել» չկա: Ուրեմն հնարավո՞ր է արդյոք որոշել խաղաղություն հաստատել և անել դա: Ի՞նչ սուբյեկտ է ձևավորվում այդ ժամանակ, և ի՞նչ ընթացակարգ է ենթադրում խաղաղության հաստատումը: Անկախ ամեն ինչից՝ խաղաղության իրականացումը չի՞ նշանակում բռնության սպառնալիքով սեփական կամքի պարտադրում: Չէ՞ որ, «ի տարբերություն պատերազմելու, խաղաղությունը չի մտածվում իբրև մի բան, որ կարելի է **անել**»[27]: Իբրև խաղաղության սուբյեկտ առաջին հերթին մտածվում են խաղաղապահ զորքերը, որոնք հայտնվում են պատերազմի կենտրոնում և պատերազմի միջոցներով զսպում ֆիզիկական բռնությունը: Սա ժխտական խաղաղությունն է, որն ընդամենը հետաձգում է ռազմական գործողությունները: Դրական խաղաղության գաղափարը հանգեցնում է մարդաբանական որոշակի հայեցակարգի և դրա դիտանկյունից խաղաղության՝ իբրև մարդու հոգեկանում առկա իրողության դիտարկման: Կարելի է մտածել, երազել խաղաղ, անվտանգ, երջանիկ կյանքի մասին, բայց արդյոք հնարավո՞ր է դա իբրև իրողություն: Եթե զոհաբերության, բռնության հակումը սուբստանցիոնալ է, ուրեմն հասկանալի են Օսվալդ Շպենգլերի՝ խաղաղությունը կասկածի տակ դնող խոսքերը. «Քչերն են դիմանում երկարատև պատերազմին առանց հոգեպես կործանվելու, ոչ ոք չի կարող դիմանալ երկարատև խաղաղությանը»[28]: Ի՞նչ ակտիվություն է զսպում, ինչի՞ հաշվին է ապահովվում խաղաղությունը: Օրինակ՝ շատ հաճախ հպարտանալու և ուրախանալու առիթ էր ներկայացվում այն, որ անկախացման շրջանում Հայաստանը, ի տարբերություն շատ այլ երկրների, խուսափեց քաղաքացիական պատերազմից: Բայց այդ ինքնազսպումը չի՞ հանգեցրել արդյոք ինքնաթունավորման և դրանով իսկ միջավայրի թունավորման: Հարցն առավել հիմնավոր կդառնա, եթե հիշենք ամերիկյան քաղաքացիական պատերազմի առնչությամբ Վուդրո Վիլսոնի դիտարկումը, թե այն երկրում ստեղծեց աննախադեպ իրողություն՝ ազգային գիտակցություն[29]: Իհարկե, սա ամենևին չի նշանակում, թե քաղաքացիական պատերազմն ազգային հարցերի լուծման բանալի է, բայց առնվազն նշանակում է, որ ուսումնասի-

27 **Cox J. G.**, The Ways of Peace: A Philosophy of Peace as Action, “Paulist Press”, 1986, p. 9.
28 **Spengler O.**, Jahre der Entscheidung, München, 1933, S. 10.
29 Տե՛ս **Huntington S.**, Who are We? The Challenges to America’s National Identity, New York, Simon & Schuster, 2004, էջ 119:

ության կարիք ունի քաղաքացիական խաղաղության, ավելի ճիշտ՝ չպատերազմի և պետության կայացման փոխհարաբերության խնդիրը:

Իբրև խաղաղության սուբյեկտներ, այսինքն՝ իբրև խաղաղությունն իրողություն դարձնելու գործընթացի նախաձեռնողներ, աշխարհում առաջինը հանդես են եկել Վեստֆալյան համաձայնագրի մասնակից կողմերը, որոնք Երեսնամյա պատերազմից հետո՝ 1648 թվականին, որոշեցին սահմանել աշխարհակարգ և ուժերի հավասարակշռման ու հորիզոնական հարաբերությունների միջոցով ապահովել խաղաղություն: Եկեղեցուց տարանջատվելու և կայսրություններին փոխարինելու միջոցով պետությունների սուբյեկտայնացումը սկիզբ դրեց, գիտակարգայնացրեց միջազգային հարաբերությունները, որոնց առանցքը խաղաղության հաստատումն է: Այս համատեքստում խաղաղությանը զուգորդվող հիմնական հասկացությունը «**աշխարհակարգ**»-ն է, որը նշանակում է որոշակի կանոնների վրա հիմնված համակարգ, որ կոչված է ոչ թե բարոյական պարտադրանքով, այլ գործնականորեն միջազգային հարթությունում ստեղծելու խաղաղ համակեցության պայմաններ: Վեստֆալի (1648 թ.) և Ուտրեխտի (1713 թ.) դաշնագրերով ստեղծված վեստֆալյան աշխարհակարգը խաղաղությունն իրողութենականացնելու, ուտոպիայից իրականության վերածելու առաջին ծանրակշիռ քաղաքական քայլն էր, որի հետևանքով ձևավորվում էր «միջազգային հանրություն» ասվածը, որը պիտի լիներ խաղաղության երաշխավորը, ասել է թե՝ սուբյեկտը: Սակայն այս սուբյեկտն ունի մի էական առանձնահատկություն, այն է՝ չկա դրան համապատասխանող որոշակի միավոր, ինչը նշանակում է, որ չկա կոնկրետ պատասխանատու: Կոնկրետ պատասխանատուի սահմաններն ավարտվում են պետության սահմաններով, իսկ վերպետական կամ վերազգային ինքնիշխանություն չկա, որն անշեղորեն կապահովեր խաղաղության միջազգային կարգերը: Ուստի զարմանալի չեն դիվանագիտության դասական դարձած Հենրի Քիսինջերի խոսքերը, թե «իրականում գլոբալ «աշխարհակարգ» երբևիցե գոյություն չի ունեցել»[30]: Աշխարհակարգի ամեն կողմ հավակնում է լինելու առաջատար սուբյեկտը և դրանով իսկ նույնանալու միջազգային հանրությանը, ինչը դարձյալ մրցակցության ու հակամարտության հիմքեր է ստեղծում: Վեստֆալյան կարգերի գլխա-

30 **Քիսինջեր Հ.**, Աշխարհակարգ, թարգմ.՝ **Ա. Մինասյան**, Եր., «Պրոֆիլ մեդիա», 2020, էջ 14:

վոր պաշտպանի հիմնական հավակնորդը գրեթե միշտ էլ ԱՄՆ-ն է եղել, որը շարունակ առաջադրել և առաջադրում է խաղաղության իր տեսլականը, համաձայն որի՝ ամերիկյան կառավարման սկզբունքները համընդհանուր են, ուստի դրանց համատարած յուրացումը բնական ճանապարհով կհանգեցնի խաղաղության և ուժերի հավասարակշռման, իսկ թշնամանքը կմնա անցյալում[31]: Այս դիրքորոշումը գալիս է դեռևս ամերիկյան պետության հիմնադիրներից, երբ, օրինակ, Թոմաս Ջեֆերսոնը հայտարարում էր, թե «Անհնար է չգիտակցել, որ մենք գործում ենք հանուն ողջ մարդկության»[32]: Մշակութային ու քաղաքակրթական տարբերություններն այս դեպքում, փաստորեն, խոչընդոտում են խաղաղության հաստատումը, բայց չէ՞ որ դրանք անօտարելի մեծություններ են, և դրանց հարկադիր փոփոխությունը, որպես կանոն, հանգեցնում է ներքին կամ արտաքին ընդվզման: Իսկ գերտերությունը հանդուրժում է միայն այն մշակութային դրսևորումները, որոնք տեղավորվում են իր հայեցակարգում: Ավելին՝ գերտերությունը, ըստ սահմանման, ձգտում է լինելու առավել լայնատարած ու մենաշնորհային, և ԱՄՆ-ի պարագայում դրա փոքր-ինչ թուլացումը երբեմն հիմք է տալիս կանխատեսելու, որ դա խաղաղության ու կայունության ճգնաժամի պատճառ կդառնա[33]: Դա գերտերության տրամաբանությունն ու հակվածությունն է, բայց ի վերջո դրան է ձգտում կամ դա է երազում ամեն մի ինքնիշխան պետություն: Հետևաբար եթե նույնիսկ գերտերությունն անթերի ապահովում է իր տարածքի անվտանգությունն ու կայունությունը, դա հավիտենական խաղաղության երաշխիք չէ, քանի որ ինքնիշխանության ձգտողը, իսկ ամեն մշակույթ ձգտում է ինքնիշխանության, խնդիր է դնում ազատվելու հովանավորությունից՝ հանուն ինքնականգնումի և ինքնաբավ գոյության: Եթե ասվածին հավելենք նաև Ն. Մաքիավելլիի հրամայականը, թե «ով չի ուզում հաղթելու հնարավորություն ունենալ, թող հրավիրի օժանդակ զորքեր, քանզի դրանք շատ ավելի վտանգավոր են վարձկաններից»[34], պարզորոշ

31 Տե՛ս նույն տեղում, էջ 18:

32 **Tucker R. W.**, **Hendrickson D. C.**, Empire of Liberty: The Statecraft of Thomas Jefferson, Oxford, Oxford University Press, 1992, p. 11.

33 Տե՛ս **Wallerstein I.**, Peace, Stability, and Legitimacy, 1990-2025/2050, “The Essential Wallerstein”, New York, The New Press, 2000, էջ 435:

34 **Մակիավելլի Ն.**, Տիրակալը, թարգմ.՝ **Գ. Բաղդասարյան**, Եր., «Սարգիս Խաչենց, Փրինթինֆո», 2016, էջ 81:

կուրվագծվի գերտերության և ենթակա պետությունների փոխհարաբերությունների՝ բռնկման վտանգով պարուրված բնույթը: Խաղաղություն հաստատողը, խաղաղության սուբյեկտ դառնալուն հավակնողը կամա թե ակամա բռնություն է կիրառում մյուս մասնակիցների նկատմամբ: Դա յուրօրինակ ու ցայտուն թեմա է հակաուտոպիական ստեղծագործություններում, որոնցում արտաքուստ խաղաղ ու ներդաշնակ կարգի հետևում միշտ կանգնած է բոլորին ստիպողաբար «խաղաղասեր» դարձնող մի ինչ-որ չարիքի դրսևորում: Այդ հանգամանքը հաշվի առնելն առավել քան կարևոր է այսօր, երբ աշխարհի կառավարումը դարձել է բազմաբևեռ, խաճողված, երբ «ո՞վ է կառավարում աշխարհը» հարցն այլևս միագիծ չէ, այլ ենթադրում է բազմաշերտ պատասխաններ[35], իսկ համաշխարհային խաղաղության մասնակիցների և հետևաբար պատերազմով սպառնացողների թիվն աճել է: Միաբևեռ աշխարհի դեմ միշտ հասունանում է ապստամբություն, իսկ բազմաբևեռ աշխարհում խաղաղության ձևի ու չափանիշների հակընդդիմություն է ձևավորվում: Ազատական ժողովրդավարությունը, որ ամերիկացի քաղաքական գործիչներին ու տեսաբաններին անկասելի էր թվում, չբավարարեց որոշ քաղաքակրթությունների, իսկ օտար պետություններում ծածանվող ամերիկյան (կամ էլ, ի դեպ, ռուսական) դրոշը ոչ միշտ է զուգորդվում բարօրության ու կատարելագործման հետ:

Խաղաղության սուբյեկտ լինելը ենթադրում է լեգիտիմության առկայություն, հակառակ պարագայում խաղաղության կոչերը որպես պատերազմի կոչ են ընկալվելու: Իսկ լեգիտիմությունը նվաճվում է, պարզ ցանկությունը չի կարող խաղաղություն ապահովել: Ինչ-որ հարցերում զիջումների գնալը, բարի կամքի դրսևորումը բավարար չեն հիմնարար խաղաղության համար, քանի որ քաղաքականությունը միջանձնային հարաբերություններից էականորեն տարբերվում է կույր համակարգայնությամբ, որը շարունակ նպատակներ է հետապնդում, ընդհուպ մինչև թշնամիների վերջնական ոչնչացումը: **Համաբանորեն՝ Արցախի հարցում հողերը նախապես հանձնելու և խաղաղության հասնելու հայտարարությունները հիմնականում անձնային չափումների մակարդակում են և, ըստ էության, չեն պատասխանում հետագա հնարավոր պատերազմների հարցին**:

35 Տե՛ս **Chomsky N.**, Who Rules the World? New York, Penguin Books, 2017, էջ 258:

Նկարագրելով նման իրավիճակում Իսրայելի՝ հակառակ ամբոխավարական աղմուկին արաբներին զիջումներ չանելու դեպքը՝ Տիգրան Հայրապետյանը գրում էր. «....այս օրինակը մենք բերում ենք ի նախազգուշացում բոլոր նրանց, ովքեր հույս ունեն, թե, հայկական նոր պետականության կառուցման նպատակի զոհասեղանի վրա զոհաբերելով Արցախի խնդիրը կամ պատմական անցյալի ծանր ժառանգությունը, կարելի է հասնել որևէ արդյունքի»[36]: **Խաղաղության ձեռքբերումը հնարավոր է միայն խաղաղության սուբյեկտ դառնալով, իսկ մյուս կողմից՝ թշնամիներին ճանաչելով և առնվազն հավասարակշռելով նրանց**:

4. Թշնամու փորձընկալումը

Խաղաղությունն անհրաժեշտաբար խաչվում է թշնամու գաղափարի հետ, քանի որ դրա կարիքն առաջանում է հենց թշնամու հետ հարաբերություններում: Թշնամին այն Ուրիշն է, որը խանգարում է սեփական ինքնիշխանության կայացմանը և չի ներդաշնակվում խաղաղության քո հայեցակարգի հետ: Ուրիշի այլությունը սեփական սահմանների որոշարկման և հետևաբար ինքնաճանաչման հնարավորություն է, բայցև սեփական ինքնության ու մշակույթի պարտադրման թիրախ: Ուրիշը վերածվում է թշնամու, երբ թույլ չի տալիս ինքնակայանալ, խոչընդոտում է հոգևոր ու նյութական հնարավորությունների իրացումը: Սակայն մյուս կողմից՝ թշնամու ի հայտ գալը խորապես հիշեցնում է հնարավորությունների մասին և մղում հասնելու մինչև դրանց հատակը: Սա, ըստ էության, նման է հոգեկանում **ստվերի**՝ մթին, ստորին կողմերի առկայությանը, որոնց գիտակցումը ինքնաճանաչողության պայմանն է: Ինչպես որ ստվերի ընդունումն է հանդիպում սուր դիմադրության[37], այնպես էլ թշնամուն ճանաչելու գործընթացը դժվարանում է անցնել հուզական պատնեշը: Առանց թշնամուն ճանաչելու, առանց հասկանալու, թե ինչու է հենց նա թշնամին, հնարավոր չէ ազատվել նրա ազդեցությունից: Սա էր հուշում նաև Նիցշեի Զրադաշտը. «Դուք պետք է ինձ համար այնպիսին լինեք, որոնց աչքը միշտ թշնամի է փնտրում՝ **իրենց** թշնամուն: .... Դուք ձեր թշնամուն

36 **Հայրապետյան Տ.**, Պատերազմ և քաղաքականություն, հատ. 1, Եր., «Newmag», 2022, էջ 56:
37 Տե՛ս **Jung C. G.**, Aion: Beiträge zur Symbolik des Selbst, Walter, 1976, էջ 17:

պետք է փնտրեք, դուք ձեր կռիվը պիտի մղեք հանուն ձեր գաղա-փարների»[38]: Թշնամուն փնտրում է նա, ով բացահայտել է սեփական հոգու խորքերը և դրանք վեր հանելու ուղիներ է որոնում: Հակառակ պարագայում թշնամին ինքն է հայտնվում, իսկ այդ ժամանակ մնում է ընդամենը հակազդելը, այսինքն՝ թշնամու տրամաբանությանը են-թարկվելը, ինչի հաջողության դեպքում նույնիսկ անիմաստ է դրա-կան, իրողութենական խաղաղության մասին խոսելը[39]:

Եթե անձնային կամ հոգևոր տիրույթում որոշակի ինքնահաղ-թահարումից հետո կարելի է շրջանցել թշնամու գաղափարը, ապա միջազգային հարաբերություններում առանց ճգնաժամի դրանից խուսափելը թերևս անհնար է, քանի որ քաղաքական նպատակները միտված են ոչ այնքան ինքնաբավարարմանը, որքան նվաճողական գործունեության խթանմանը, ինչի համար թշնամու փնտրտուքը գրե-թե չի դադարում: Հատկանշական է Սառը պատերազմի ավարտին Խորհրդային Միության նախագահի խորհրդական Գեորգի Արբատո-վի խոսքը՝ ուղղված ԱՄՆ-ին. «**Մենք ձեզ համար սարսափելի մի բան ենք անում. մենք ձեզ զրկում ենք թշնամուց** (ընդգծումը մերն է – Դ. Մ.)»[40]: ԱՄՆ-ն, որ ավելի շուտ հավաքական միավոր է, առանց թշնամու իսկապես մենակ է մնում և կարծես կորցնում ինքնության զգացումը: Երբ որ կարիք չի լինում պաշտպանելու, խնամելու մշա-կույթը, այն նոսրանում ու տարրալուծվում է և կորցնում կրողների համար ուղենիշ լինելու հատկությունը: Կարելի է մշակութաբանա-կան սկզբունք ձևակերպել, համաձայն որի՝ որքան ազգն օտարացած է իր մշակույթից, այնքան հրատապ է դառնում թշնամու որոնումը՝ որպես ինքնության զարթոնքի գրավական: Թշնամու բացակայու-թյան պայմաններում խաղաղ վիճակ է լինում, բայց այն չի ունենում գոյաբանական հիմք, քանի որ չկա այն ապահովող ու կրող սուբյեկտը: Խնդիր է դրվում գտնելու, անգամ ստեղծելու թշնամի, որին ոչնչացնե-լով խաղաղության պատումն իրականություն կդառնա: Ըստ էու-թյան, հենց դա էր Սառը պատերազմից հետո արաբական աշխար-

38 **Նիցշե Ֆ.**, Այսպես խոսեց Զրադաշտը, թարգմ.՝ **Հ. Մովսես**, Եր., ԻԻԿ, 2008, էջ 97-98:

39 Այս համատեքստում ուշագրավ է Կոստան Զարյանի մի ձևակերպումը, որ թշնամու ազդեցու-թյան հաղթահարումն է մատնանշում. «Ես գնում եմ… պաշտպանելու Բախեան ոգին տաճիկնե-րից եւ ուրիշ թշնամիներից….» (**Զարեան Կ.**, Նաւը լերան վրայ, Եր., «Սարգիս Խաչենց, Փրինթ-ինֆո», 2015, էջ 460):

40 **Arbatov G.**, Preface, **Smoke R., Kortunov A.** (eds.), Mutual Security: A New Approach to Soviet-American Relations, New York, St. Martin's Press, 1991, p. xxi.

հով ամերիկյան հետաքրքրվածության պատճառը: ԱՄՆ-ն լայնածավալ պատերազմ հայտարարեց ահաբեկչության դեմ, որի շրջանակներում իսլամը դարձրեց իր բնազանցական թշնամին[41], ինչը բավականին շատ տարընթերցումների տեղիք տվեց. դա պատերազմ էր ահաբեկչությա՞ն, թե՞ ընդամենը ամերիկյան մշակույթից տարբերվող իսլամի դեմ:

Թշնամու որոնումը քաղաքական և մարդաբանական առումով հիմնավորվում է այն պնդմամբ, որ հակառակ դեպքում թշնամին էր իր համար թշնամի բացահայտելու: Թշնամացման սկիզբը, պատճառը գտնելու ժամանակագրական գործոնն այստեղ բնավ չի աշխատում, քանի որ միշտ կա ոչ բացահայտ թշնամու գոյության փաստարկը, ինչը խոսակցությունը տանում է բնազանցական ոլորտ՝ թշնամուն համարելով հղացք, գաղափար, մինչև անգամ գործիք: Եվ սա այն դեպքն է, որ երբ չես հասցնում թշնամուն իբրև գործիք հղանալ, մտածել, ինքդ ես ենթարկվում նրա կամքին: Թևավոր խոսք է դարձել լորդ Փալմերսթոնի՝ ինքնությունն ու խաղաղությունը բնութագրող բանաձևը. «Մենք չունենք հավերժական դաշնակիցներ ու հավերժական թշնամիներ: Մեր շահերն են հավերժական, և մեր պարտքն է մեր շահերին հետամուտ լինելը»[42]:

Հավերժական թշնամին ոչ միայն գործնական բարդություններ է ստեղծում, այլև ինքնության որոշակի կերպ է պարտադրում, որը լինել-չլինելու խնդրի առաջ է կանգնեցնում: Բացի դրանից՝ հավերժական թշնամին ավելի շուտ ընտրության հարց է, քան իրականության, որովհետև դրա հիմնավորումն անվերջ կարող է լինել: Հայ-թուրքական հարաբերությունների առումով ևս խնդիրն արդիական է և կարոտ է հետազոտման: «Թուրքի հետ հնարավոր չէ խաղաղ համակեցություն» արտահայտությունը էութենապաշտ (էսսենցիալիստական) հիմքեր ունի, որ նախ՝ բացառում է ինքնութենական փոխակերպումը, երկրորդ՝ նույնացնում է մարդուն և պետությունը: **Ամբողջ խնդիրն իրավիճակից վեր կանգնելու և սեփական լեզվագիտակցությամբ թուրքին իբրև Ուրիշ, իբրև թշնամի ընկալելու կարողության սաղմնավորումն է: Քանի դեռ դա չի արվել, և գնահատականները խիստ հուզական են, հնարավոր չի լինի նրանց**

41 Տե՛ս **Köchler H.**, World Order: Vision and Reality, Manak, 2009, էջ 58:
42 Մեջբերումը՝ ըստ **Քիսինջեր Հ.**, նշվ. աշխ., էջ 43:

դահիճից թշնամու փոխակերպելու գործընթացը, իսկ դահիճը միշտ իրավիճակ թելադրողն է: Թշնամին ոչ թե անձնային մակարդակում է, այլ պետական, որովհետև «պատերազմը հարաբերություն է ոչ թե մարդկանց, այլ պետությունների միջև, որտեղ առանձին մարդիկ թշնամանում են միայն պատահականության բերումով և ոչ որպես անհատներ կամ նույնիսկ քաղաքացիներ, այլ զինվորներ»[43]: **Խաղաղություն հնարավոր է փորձել հաստատել թշնամու հետ, այլ ոչ թե դահճի, իսկ թշնամուն սահմանում են և գործնական վերաբերմունք հաստատում:**

Կառլ Շմիդտը քաղաքականի հասկացությունը մտածելիս այն սերտորեն միահյուսում էր թշնամու գաղափարի հետ՝ ձգտելով ամեն կերպ այն ազատելու բարոյական ծանրաբեռնվածությունից: Հիշատակելով ավետարանական «սիրի՛ր թշնամուդ» պատգամը՝ նա նկատում է, որ հունարենում և լատիներենում կան «թշնամի» իմաստն արտահայտող երկու բառեր՝ hostis (πολέμιος) և inimacus (εχθρός), որոնցից առաջինը մասնավոր, անձնական թշնամին է՝ ոչ ընկերը, ինչը նկատի է առնվում Ավետարաններում, իսկ երկրորդը՝ քաղաքական թշնամին[44]: Inimacus-ին, այսինքն՝ քաղաքական թշնամուն, հնարավոր չէ սիրել, և, ի դեպ, պարտադիր չէ ատել, որովհետև այն հղացք է, քաղաքական որոշման և դիրքորոշման արդյունք: Թշնամությունը քաղաքական լարվածության աստիճանի մեջ է, որն առաջանում է նպատակներ ձևակերպելու, ինչպես նաև նախընտրելի պայմաններով խաղաղություն պարտադրելու հետևանքով: Քաղաքական այդ նպատակները կարող են խաչվել, ինչը կհանգեցնի բախումների, որոնք կապ չունեն անձնային դիրքորոշումների հետ. «Պատերազմը սոսկ թշնամության ծայրահեղ գործադրումն է»[45]: Այս դիտանկյունից պատերազմն ինքնին իրապաշտական իրողություն է, ցանկություններից ու բարոյական կեցվածքներից անդին է: Այն կարող է տեղի ունենալ անգամ բոլոր մասնակիցների կամեցողության բացակայության պայմաններում, քանի որ ենթարկվում է քաղաքական (ոչ անձնային) տրամաբանության: Չկա «զուտ» կրոնական, «զուտ» տնտեսական կամ բարոյական պատերազմ. պատերազմը, ըստ սահմանման, քաղաքական է՝ դաշնակցի և թշնամու ընտրության արդ-

43 **Ռուսո Ժ.-Ժ.**, նշվ. աշխ., էջ 29:
44 Տե՛ս **Schmitt C.**, Der Begriff des Politischen, Berlin, Duncker & Humblot, 1991, էջ 29:
45 Նույն տեղում, էջ 33:

յունք[46]: Քաղաքականության իմաստը հենց շրջապատի բաժանումն է դաշնակիցների, չեզոքների, թշնամիների և համապատասխան կամքի դրսևորումը: Ընդ որում, հենց որ քաղաքականությունը դուրս է գալիս սեփական շահերի տիրույթից և բարոյական չափումներ ստանում, սկսում է ձևավորվել «հանուն մարդկության» պատերազմի հայեցակարգը, որն ամենադաժանն է, քանի որ թշնամուն դիտարկում է որպես համամարդկային չարիք և խնդիր դնում ոչ թե ելման դիրքեր ուղարկելու նրան, այլ հիմնահատակ կործանելու[47]: Եթե պատերազմը թշնամու դեմ ուղղված այսօրինակ քաղաքական կամքի դրսևորում է, ուրեմն խաղաղությունն այդ կամքի դիմագրավումն է: Բայց ինչպե՞ս հնարավոր կլինի դեմհանդիմանությունը, որպեսզի երկու կողմերն էլ հրաժարվեն թշնամու տվյալ փորձընկալումից և փոխեն նրա կերպարը:

5. Խաղաղություն. փաստաթո՞ւղթ, թե՞ գործընթաց

Պետությունը՝ իբրև միջազգային քաղաքականության սուբյեկտ, իրավասու է խաղաղության պայմանագիր կնքելու այլ պետության հետ, բայց այստեղ առնվազն երկու հարց կարող է ծագել. առաջին՝ ինչի՞ հաշվին է այդ խաղաղության փաստաթուղթը, այսինքն՝ ի՞նչն է փոխվել, ի՞նչն է հնարավոր դարձրել մինչ այդ անհնարին թվացող խաղաղությունը, և երկրորդ՝ ի՞նչ գործընթացներ են ենթադրվում այդ փաստաթղթով, մինչև ո՞ր տիրույթ, հասարակական կյանքի ո՞ր մակարդակ կարող է հասնել խաղաղությունը և պահպանվելու ի՞նչ հիմքեր ունի: Խաղաղության պայմանագրերը, որպես կանոն, լինում են կա՛մ ռազմական ճանապարհի փակուղայնության գիտակցման, կա՛մ էլ կողմերից որևէ մեկի լիարժեք կապիտուլյացիայի արդյունք: Առաջին տարբերակը ելնում է սեփական շահերից, բայց մնում է սոսկ իբրև պատում՝ ամենևին չվերացնելով հետագա հնարավոր պատերազմների աղբյուրը, մանավանդ եթե կա ուժերի վերադասավորման հավանականություն: Ավելին՝ զոհերի սերունդներն անարդար են համարելու եղած պայմաններով դաշինքը և, ի զորու չլինելով փոխակերպելու թշնամության զգացումը, ընդամենը հետաձգելու են

46 Տե՛ս նույն տեղում, էջ 36:
47 Տե՛ս նույն տեղում, էջ 37:

պատերազմը: Նմանօրինակ իրավիճակում պատերազմի բացակայությունը բնավ խաղաղության վկայություն չէ, քանի որ փոխզսպման մեխանիզմներն ընդամենը վսեմացնում են ագրեսիան, որը անհրաժեշտաբար այլ դրսևորումներ է ունենալու: Բայց դա, իհարկե, պատերազմի հետաձգման արքայական ճանապարհն է: Այլ կերպ՝ «Ուժերի հավասարակշռությունն ինքնին խաղաղություն չի ապահովում, բայց եթե այն հանգամանորեն մշակված է ու հարգվում է անվերապահորեն, ապա կարող է սահմանափակել արմատական դիմակայությունների մասշտաբն ու հաճախականությունը և թույլ չտալ, որ դրանք գլոբալ աղետի վերածվեն»[48]: Սա համահունչ է արևելյան մարտարվեստների ոգուց եկած «խաղաղություն ես ուզում, պատրաստվի՛ր պատերազմի» սկզբունքին:

Ուժերի հավասարակշռման սկզբունքը չի գործում կապիտուլյացիայի պարագայում: Հասկանալի է, որ պարտված կողմը չի կարող խաղաղություն պարտադրելու լեզվով խոսել: Միակ հնարավորությունը միջազգային հանրությանը ներգրավելն է և մարդու իրավունքների նորմերին հղում անելը: Սակայն դա զուտ իրավական խնդիր չէ, որովհետև չկա, այսպես ասած, միջազգային ոստիկանական համակարգ: **Միջազգային իրավունքը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան իրավական հարթությանը, որքան միջազգային հարաբերություններին և քաղաքականությանը, իսկ վերջինս նախ և առաջ սեփական շահերի գիտակցման և դրանցով առաջնորդվելու ասպարեզ է: Բարոյական, խաղաղասեր կեցվածքը ոչ միայն բավարար չէ ցանկալի խաղաղությունը նվաճելու համար, այլև թուլության դրսևորմամբ կարող է թշնամուն պատերազմելու մտքեր հաղորդել:** Բավական է հիշենք համաշխարհային խաղաղության անունից հանդես եկող ԱՄՆ նախագահներից մեկի՝ Թեոդոր Ռուզվելտի խոսքերը՝ համոզվելու համար ասվածում. «Ես ատում ու արհամարհում եմ այն կեղծ մարդասիրությունը, որը քաղաքակրթության առաջընթացը պայմանավորում է ռազմի ոգու թուլացմամբ ու դրանով թերզարգացածին հրավիրում է ոչնչացնել զարգացած քաղաքակրթությունը»[49]: Դժվար է պատկերացնել պատերազմ տենչացող որևէ մեկի, բայցև հասկանալի չեն ինքնահակասականությամբ

48 **Քիսինջեր Հ.**, նշվ. աշխ., էջ 22:
49 Նույն տեղում, էջ 265:

լցված պացիֆիզմի պլակատային նշանաբանները: Հետևողական պացիֆիստը պիտի պատրաստ լինի պատերազմ հայտարարելու ընդ-դեմ պատերազմի, ինչը ենթադրում է բռնանալու կամք և ուժ:

Այսպիսով՝ բարի կամքով խաղաղության հասնել հնարա-վոր չէ, իսկ ամեն գնով խաղաղության պայմանագիր կնքելը կարող է հղի լինել ներքին ու արտաքին լարվածությամբ: Բացի դրանից՝ ժամանակակից հիբրիդային պատերազմների ի հայտ գալով էլ ավելի է բարդացել պատերազմը խաղաղությունից տարբերակելը: Խաղաղության փաստաթուղթը չի բացառում հո-գեբանական գրոհներն ու կիբեռհարձակումները, որոնք տեսա-նելի չեն և կարող են դրսևորվել հասարակական կյանքի ցան-կացած ոլորտում: Խաղաղությունը միայն վերևից ներքև իջնող հրաման չէ, հանրությունը ևս էական դերակատարում ունի, բայց դրա համար հիմնավոր պատճառներ է ուզում:

Դավիթ Ռ. Մոսինյան – ԲՊՀ դոցենտ, գիտական հետաքրքրություն-ների շրջանակն ընդգրկում է պատմության փիլիսոփայությունը, մշակութա-բանությունը, գիտության մեթոդաբանությունը և կինոյի տեսությունը:

Էլ. հասցե՝ drmosinyan@bryusov.am

Summary

PEACE AS A NARRATIVE AND FACT

Davit R. Mosinyan
Candidate of Philosophical Sciences

Key words – peace, war, violence, aggression, enemy, world order, history, narrative, fact.

Peace and security have long been one of the most important standards of modern life. Among universal values, they are primary. Nevertheless, the number of deaths due to war worldwide has decreased in recent decades, and war operations in general have decreased, their intensity not only has not weakened, but also their involvement has expanded, including even civilians on various platforms.

Wars have been transformed, and their research can no longer be satisfied by studying only the war operations themselves. Just as after the end of colonialism by force of arms, only its forms were changed and revealed through postcolonial research, so the transformations of war violence entail the development and application of new research methods. In particular, with the emergence of informational, hybrid wars, an outward similarity is created between the states of war and peace. Therefore, there is a need to study peace as such, as a goal of coexistence, to determine the nature of war and the limits of its spread from these positions. Peace has long been observed from moral, religious, and similar points of view, but is it possible to scientifically systematize these observations? What does peace mean, when can its presence be recorded, is it a part of a reality or is it a part of the agreement texts? These are questions, the answers to which will be aimed not only at determining the possibility of peace in general, but also at reviewing the history and making sense of the perspectives of political visions from that point of view.

Резюме

МИР КАК НАРРАТИВ И ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ

Давид Р. Мосинян
Канд. филос. наук

Ключевые слова - мир, война, насилие, агрессия, враг, миропорядок, история, нарратив, факт.

Мир и безопасность уже давно являются важнейшими критериями оценки событий современной жизни. Среди общечеловеческих ценностей они первичны. И все же, несмотря на то, что за последние десятилетия в целом уменьшилось количество боевых действий и количество погибших, их интенсивность не только не ослабела, но и увеличилась вовлеченность мирных граждан. Войны трансформировались, и их исследования уже не могут ограничиваться только изучением самих военных действий. Подобно тому, как после победы колониализма силой оружия, изменялись только его формы, так и трансформации военного насилия влекут за собой разработку и применение новых методов исследования. В частности, с появлением информационных, гибридных войн создается впечатление, что существует внешнее сходство между состояниями войны и мира. Поэтому возникает

Վէմ հասարակական հանրագիտարան, ԵՊՀ (Ս) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

необходимость изучения «мира» как такового, как цели сосуществования и определения с этих позиций характера войны и пределов ее распространения. «Мир» уже давно исследуется с моральной, религиозной и тому подобных точек зрения, но можно ли научно систематизировать эти наблюдения? Что означает «мир», когда его наличие можно зафиксировать, является ли он частью реальности или частью текстов соглашений? Это вопросы, ответы на которые не только определяют возможности обеспечения мира вообще, но и дают возможность изучить историю и осмыслить перспективы политических видений.

REFERENCES

1. **Fuko M.**, Hskel yev patzhel, t‘argm.` A. Muradyan, Yer., “AyevM”, 2003 (**In Armenian**).
2. **Fukoy M.**, Imatsut‘ean kamets‘oghut‘iwnĕ: Seṛakanut‘ean patmut‘iwn 1, t‘argm.` M. Nshanean, Yer., “Ink‘nagir”, 2019 (**In Armenian**).
3. **Fuko M.**, Nuzhno zash’ish’at‘ obsh’estvo, per. Je. A. Samarskaja, SPb, “Nauka”, 2005 (**In Russian**).
4. **Gobbs T.**, Sochinenija v dvux tomax, t. 2. Per. A. Gutermana, M., “Mysl‘”, 1991 (**In Russian**).
5. **Hayrapetyan T.**, Paterazm yev k‘aghak‘akanut‘yun, hat. 1, Yer., “Newmag”, 2022 (**In Armenian**).
6. **K‘isinjer H.**, Ashkharhakarg, t‘argm.` A. Minasyan, Yer., “Profil media”, 2020 (**In Armenian**).
7. **Mak‘iavelli N.**, Tirakalĕ, t‘argm.` G. Baghdasaryan, Yer., “Sargis Khach‘ents‘, P‘rintinfo”, 2016 (**In Armenian**).
8. **Nits‘she F.**, Ayspes khosets‘ Zradashtĕ, t‘argm.` H. Movses, Yer., IIK, 2008 (**In Armenian**).
9. **Ṛuso Zh.-Zh.**, Hasarakakan dashink‘i masin, t‘argm.` A. Blbulyan, Yer., “Zangak”, 2016 (**In Armenian**).
10. **Servantes M. de**, Hnaramit Hidalgo Don Kikhot Lamanchetsi, hat. 1, Yer., 1950 (**In Armenian**).
11. **Zarean K.**, Nawĕ leran vray, Yer., “Sargis Khach‘ents‘, P‘rintinfo”, 2015 (**In Armenian**).
12. **Zhirar R.**, Zavershit‘ Klauzevica. Besedy s Benua Shantrom, M., BBI, 2019 (**In Russian**).